ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "ГЕГАРКУНИК НАИРИ"
RA MARZ GEGHARKUNIK LLC "GEGHARKUNIK NAIRI"

հեռ. (093) 18-44-18 էլ. փոստ.gexarquniqnairi@mail.ru

№ U-25-13 «14» ապրիլի 2025թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջանի քաղաքի Շամախյան փողոցի N27/1 հասցեում գտնվող մշակութային կենտրոնի շենքի տեխնիկական վիճակի և դրանում հիմնանորոգման աշխատանքների իրականացման հնարավորության վերաբերյալ

Պատվիրատու՝
Դիլիջանի համայնքապետարան
Համայնքի ղեկավար՝ Դ. Սարգսյան

Կատարող՝
«Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ
Տնօրեն՝ Լ. Մելետիսյան

Գավառ 2025թ.

ԳՅՈՒՂԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՀԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՀՍԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Լիցենզիա

ՔՊԼ-001175, 1-ին դաս

(Թիվը, կարգը, դասը)

ՍՊԱՍՏՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2024-09-29, «ԱԵՂՄԱՎԻՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՍՊՄԸ

(Լիցենզիայի տեսակը, անվանումը կամ գործունեության տեսակը)

«Հ, ԱԵՂՄԱՎԻՐԱՆԱՔ, Ք. ԱՍՏԱՍՈՒՄ ԱԾԱԾԱՆ Գ.»,

(Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող տնտեսավարողի անվանումը, տեղամասը, փողոցը, տունը, շենքի/կառույցի համարը, հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

29.09.2029թ. ՝Նորհայտ Գործակալություն

(Լիցենզիայի գործողության ժամկետը)

(Անունը, ազգանունը, հայրանունը)

ՀԱՅԿԻ ՀԱՄԱՐ՝ UG5E-568E-6351-D7EF

Սույն փաստաթղթի բովանդակությունը էլեկտրոնային եղանակով ստուգելու համար մուտքագրեք https://verify.e-gov.am Հանրային ծառայությունների միասնական պորտալի համապատասխան դաշտում կամ սկանավորեք QR Code-ի միջոցով:

Փաստաթուղթն ստեղծվել է էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային տեղեկատվության տեսքով պատրաստված սույն փաստաթուղթն ունի նույն իրավական ուժը, ինչ թղթային տարբերակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001175-12

(ներդիրի սերիան, համարը)

«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՆԱԻՐԻ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

29.09.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝ 29.09.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG9A-96E2-4A7C-5BB7
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ՄԻԽԱԻԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հ	000950	2024-08-01

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG9A-96E2-4A7C-5BB7
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

«Հաստատում եմ»
«14» ապրիլի 2025թ.

«Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Ավետիսյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջանի քաղաքի Շնամախյան փողոցի N27/1 հասցեում գտնվող մշակութային կենտրոնի շենքի տեխնիկական վիճակի և դրանում հիմնանորոգման աշխատանքների իրականացման հնարավորության վերաբերյալ

Աշխատանքը կատարվել է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի և «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ միջև կնքված 09.04.2025թ. N ՀՀ-ՏՄԴՀ-ՄԱԾՁԲ-25/15 պայմանագրի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված մշակութային կենտրոնի շենքի ակնադիտական ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է «Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020, «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում, հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20.06-2014 նորմերի և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրման /անձնագրավորման/ մեթոդական ցուցումներ»-ի համաձայն:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող շենքի տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը Amax=0.4g (ՀՀՇՆ 20.04–2020 ըստ հավելվածաս 1-ի):

Զննված շենքը թեք տեղանքի հարթեցված տեղամասում 2000-ական թվականների վերջին իրականացված, հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով, մոտ 7.0x30.0մ եզրաչափերով, մեկ հարկանի հասարակական գործառնական նշանակության առանձին կառույց է (նկ. 1):

1. Շենքի ընդհանուր տեսքը



Կառույցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկու երկայնական կրող ու լայնական պատերով, լայնական ներքին միաձույլ երկաթբետոնե շրջանակներով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, միաձույլ երկաթբետոնից:

Պատերն ունեն 50սմ հաստություն և հիմնականում իրականացված են տուֆաքարի երկշերտ շարվածքով ցեմենտավազային շաղախի կիրառմամբ, բացի բակային ճակատի պատից իրականացված միաձույլ բետոնից և կանոնավոր ձևի տուֆաքարի շարվածքից:

Պատերի որմացքում առկա են միաձույլ երկաթբետոնե միջուկներ խարսխակապված պարզունակների ու պատերի պարագծով իրականացված միաձույլ երկաթբետոնե գոտու հետ:

Պատերում բացվածքները հիմնականում կամարաձև են և դրանց բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Գլխավոր ճակատի ու աջ կողաճակատի պատերն արտաքինից երեսպատված են ֆերզիտե սալերով, ստորին մասերը բազալտե սալիկներով, իսկ ձախ կողաճակատի պատը սվաղված է ցեմենտավազե շաղախով:

Վերնածածկն իրականացված է հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Հարկի բարձրությունը կազմում է 3,3մ:

Տանիքը հարթ է, խճանկարային ջրամեկուսիչ շերտով, ճաղաշարով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ և լուծված է բաց հարթակի տեսքով:

Կառույցի ամբողջ երկարությամբ, բակային ճակատի պատի դիմաց, մոտ 1,0մ հեռավորության, իրականացված է միաձույլ բետոնով ու տուֆաքարի շարվածքով հենապատ:

Նշված հենապատի ու կառույցի միջև իրականացված է վերնածածկ միաձույլ երկաթբետոնե սալով, հարթակի տեսքով, որը մի ծայրով հենված է հենապատի, իսկ մյուս ծայրով բակային ճակատի պատի վրա (նկ. 2):

2. Կառույցի բակային ճակատի հատվածամասի տեսքը



Կառույցը գլխավոր ճակատի և աջ կողաճակատի կողմից ունի հարթակ, սալիկապատվածքով: Ընդ որում հարթակի եզրային ստորին մասերը երեսապատված են կոպտատաշ միաշերտ բազալտաքարերով:

Զննմամբ պարզվեց հետևյալը

❖ Շենքի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալից ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում.

❖ Տանիքածածկույթի վնասվածության պատճառով, ինչպես և մթնոլորտային ու անձրևաջրերի կուտակումներից վերնածածկի և պատերի որոշ տեղամասերում կան խոնավացման հետքեր (նկ. 3).

3. Վերնածածկում և պատերում խոնավացման հետքերի տեսքը



❖ Կառույցի ծախ կողաճակատի պատի սվաղաշերտը ունի վնասված տեղամասեր (նկ. 4).

4. Սվաղաշերտի վնասված հատվածամասի տեսքը



❖ Տեղի է ունեցել արտաքին երեսապատվածքի տարանջատումներ պատերից

❖ Շենքի շուրջ արտաքին սալվածքը ու հարթակը գտնվում է բուսածածկ, անբավարար վիճակում (նկ. 4).

5. Արտաքին սալվածքի տեսքը

Ելնելով հետազննության արդյունքներից կառույցի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 2-րդ աստիճանի:

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով կառույցի բավարար տեխնիկական վիճակը, դրանում նորոգման աշխատանքների իրականացումը տեխնիկապես հնարավոր է հետևյալ աշխատանքների կատարման պայմանով՝

❖ Տանիքածածկույթի շրաթափանցելությունը ապահովելու նպատակով, դրա մակերևույթի վրա իրագործել նոր ծածկույթ սալիկապատման եղանակով, ապահովելով կանոնակարգված շրահեռացման պայմանները.

❖ Վերականգնել կառույցի ձախ կողաճակատի պատի սվաղաշերտի վնասված տեղամասերը.

❖ Խարիսխել երեսպատվածքի սալիկները պատաշարվածքի հետ խցաբութակներով.

❖ Շենքում կատարել նորոգման աշխատանքներ.

❖ Կառույցի շուրջ իրագործել կանոնակարգված շրահեռացմամբ նոր սալվածք.

Բոլոր նշված աշխատանքները պետք է կատարել անհատական մշակված և փորձաքննությունը անցած նախագծի համաձայն:

Մասնագետներ Ռ. Խաչատրյան

Մ. Հարությունյան